

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ՄՈՒՐՃԻ ՆԵՐԿԱՅ ԳԻՐՔԸ Ներկայանում է միացած թւերով, հակառակ մեր սկզբնական ծրագրի: Այդ հարկի մէջ եղանք Պուչկինի ծննդեան 100-ամեակի տօնից առաջ պ. Լիսիցեանի աւդ առթիւ գրած մեծ յօդածը հասցնելու համար, որը միզ շար ուշ լանձնեց:

ՆԻԷՐՆԵՐ ՄՈՒՐՃԻ ՊԱՐՏՔԵՐԸ ՀԱՆԳՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Մենք սրացել ենք տպագրելու համար հետեւեալ նամակը.

«Ախալքալաք, 1899 թ. մալիսի 7-ն:

Մի խումբ երիտասարդներ, Մուրճի 10-ամեակի առթիւ կամենալով իրանց համակրանքը չափնել ամսագրիդ՝ նւիրում են 30 ռ. 90 կ., որից 20 ռ. 90 կ. շնում են չարգելի խմբագրի տրամադրութեան տակ, իսկ 10 ռուբլիով խնդրում են աւս 1899 թ. մի օրինակ Մուրճ ուղարկել Ախալքալաքի գաւառի Վաչիան գիւղի երիտասարդներին: Զաւալ Տէր-Գրիգորեան»:

Ահա նւիրատունների ցուցակը.

Վաչեան գիւղի մի խումբ երիտասարդներ 5 ռ., Զ. Տէր-Գրիգորեան և Երանունի Տէր-Գրիգորեան 3, Վարդան Շահապարոնեանց 3 ռ., Աշատի Հովհեան, Թորոս Պետրոսեան 2-ական ռուբլի: Ղազարոս Տէր-Գրիգորեան, Յակոբ Աղնաւուրեան, Յակոբ Բեգիրզանեան, Մի ոմն, Հ. Ալբերտեան, Յ. Քօսեանց, Ե. Սիմէօնեանց, Շաւարշ Գեմիրճօղեան, Պօղոս Գիւլանեան, Ստեփան Շեխօսեանց, Ա. Փասպանդեան, Վաղարշակ Մանանդեանց, Ա. Եղիազարեանց, Թադէոս Գաբրէլեանց և Գրիգոր Պապուհեանց 1-ական ռուբլի. պ.պ. Ստ. Մելիքէթեան 50 կ., Ոմն 40 կոպ. Գումար 30 ռ. 90 կոպ.:

Յիշեալ գումարից 20 ռ. 90 կոպէկ չտրկացնելով Մուրճի պարտքերը հանգցնելու գործին, աւդ նպատակով մեր սրացածների գումարը կազմում է 1.678 ռ. 90 կոպէկ:

ԳԵՕՔԷՆ ՄՈՒՐՃՈՒՄ. Դեռ ևս 1894-ի շեկտեմբերին մենք կարելի էինք համարում ծանուցանել Մուրճի ընթերցողներին, թէ պիտի տպագրենք Գէօթէի Ֆաուստը, Հերման Գորոթէոն և Էգմոնտ՝ը, Գոցանից վերջին երկուսը տպագրեցինք, մէկը (Թարգմանութեամբ Պր. Լևոն

Տիգրանեանցի) 1895-ին, միւսը՝ Էգմոնտը, թարգմանութեամբ Պր. Հմայեակ Մաթիսեանի, 1896 թւին, հրկուսն էլ արձակ թարգմանութեամբ: Ֆառուստի տպագրութիւնը ուշացաւ՝ թարգմանութեան շեռ. ևս կատարելագոյն պատրաստ չլինելուն համար: Նորա թարգմանիչ բժ. Լեոն Տիգրանեանից ալժմ արդէն ստացել ենք ձեռագիրը: Թարգմանութիւնը արձակէ. ալժմ նա խմբագրութեանս քննութեան ներքոյ է. տպագրութիւնը կ'սկսւի թերևս գալ ամսանից:

ԱԿԵԼԵԱՆԻ «ՍԿԵՍՈՒՐԸ», որ տպւեց Մուրճի ալս տարւալ առաջին համարներում, մինչև ամսիս վերջը լոյս կ'տեսնի առանձին հրատարակութեամբ: Սա առաջին անգամն է որ երկրասարդ վիպասանի մի գրածք առանձին գրքով ևս հրատարակ է դալիս: Աշխեանը միշտ գրել է գիւղի կեանքից, և, մինչդեռ Պերճ Պառնեանը գիւղ ու գաւառի մի աննման նկարագրող է Աշխեանը գիւղական կեանքի առանձին խնդիրներն է շօշափում ակնաւորի շիտաւորութեամբ չարիքների շէմ բարիների տիպարներով լուսաւոր մտքեր մտցնել գիւղի կեանքի մէջ: Շատ կարելի է որ լաւերի տիպերը հեղինակը ինքն է ստեղծում կամ իրականի լաւը իշխալացնում—բաւց աւշ ամենը կատարւում է ներդաշնակութեան սահմաններով մէջ, դուրս չգալով որսած կեանքի և ժամանակի պալմաններից: Գրսից ներմուծելիք նոր գալափարների համար հեղինակը հմութեամբ գիտէ միջնորդը տրել տիպեր բնիկ ժողովրդի ներկայացուցիչների միջից, և աւշպիտով նորը անմիջական ժողովրդական հողի վրալ սերմանել: Սկեսուր՝ Աշխեանի ամենալաջող պատմածքը կարող ենք նկատել՝ Ներհակ Առաքելից ցեղով:

ԴԵՐՆԵԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ՝Ը պատրաստել է իւր ոտանաւորների մի փոքրիկ ժողովածուն, որը, հրատարակութեամբ տ. Երանուհի Տէր-Գրիգորեանցի, մինչ ներկալ մալիսի վերջը պիտի լոյս տեսնի: Ժողովածուի մէջ կ'լինեն Մուրճում լոյս տեսածները, բաւց ոչ բոլորը, և մի քանի նորեր: Դերենիկ Դեմիրճեանի ոտանաւորների մէջ երևում է զգացմունքի խորութիւն և անկեղծութիւն, որոնք դարձնում են հեղինակին մի խակատիպ բանաստեղծ, թէն նա շեռ. ևս միայն կազմելու չըմանի մէջն է:

ՄԵՐ ՎԻՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ, Մուրճի ներկալ №-ում տպւում է Մաքսիմ Գորկիի մի փոքրիկ պատմածքը, որը մի արձակ բանաստեղծութիւն է: Ռուսաց գրականութեան մէջ նոր լալտնած վիպական տալանշներից է հեղինակը: Պր. Լեոն Թումանեանցը ստրանով իւր երկրորդ լաջող թարգմանչական փորձն է անում. (առաջինը տես Մուրճ 1898 թ. № 4):

ՍՍԱՅԵԼ ԵՆՔ պ. Կար, Կոստիկեանից «Մեր իրականութեան տիպերը՝ Արսէն Դիմաքսեան վէպի մէջ» ընդարձակ լօրածո, որը թերևս կա-

րենանք դալ համարից տպագրելւ. — Ռոքո. Կար. Փաշանանից՝ «Ալկոհոլականութեան վտանգը», որի տպագրութիւնը հաւանորէն միայն լուրիսից կարող կ'լինինք սկսել:

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ ՀՐԱՄԱՆՈՎ մալիսի 6-ին Սիբիրը իբրև աքսորավազ և իբրև լանցաւորների համար տաժանակիր աշխատանքների տեղ՝ վերացում է: Կազմած է մասնաժողով, արդարադատութեան միտրորի նախագահութեամբ, մշակելու համար աչս կէտերը. 1) Դատարանի որոշած աքսորը փոխարինել ուրիշ՝ համապատասխան պատժով. 2) մէջաններ և գիւղական հասարակութիւնների վճռով աքսորը վերացնել կամ սահմանափակել. 3) վերակազմել տաժանակիր աշխատանքը և դորան չաջորդող աքսորադեղերը. 4) բարւոքել աչժմ Սիբիրում գտնուող աքսորականների վիճակը. 5) վերակազմել ստիպողական հասարակական աշխատանքը և բանտրական տները, որպէս արգելաօրթ և պարծող միջոցներ. 6) գտնել դրամական միջոցներ, որոնք անհրաժեշտ են աչդ ձեռնարկութիւնները իրագործելու համար:

Թագաւոր Կալսեր աչս նշանաւոր հրովարտակը պատճառարանւած է նրանով, որ ներկայիս Սիբիրը իւր աչժման ազգաբնակութիւնով և երկաթուղու գծով էապէս տարբերում է նախկին Սիբիրից:

ՀԱՅ-ԼՈՒՍԱՒՈՐԶԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԽՆԴԻՐԸ: Թիֆլիսի «Կաւկազ» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալը՝ «Կառավարիչ Սենատի բացատրութիւնը հալ-լուսաւորչականների երդման լեզւի մասին» խորագրի ներքոյ:

«Յունւարին 1891 թ. էջմիածնի հալ-լուսաւորչական սինոդը հասցրեց ի գիտութիւն ներքին գործոց մինիստրի, թէ հանգուցեալ Մակար կաթողիկոսը հրամանագրել է բոլոր հալ-լուսաւորչական թեմական առաջնորդներին արգելել նոցա ստորադրեալ հոգևորականութեան, եկեղեցական կանոններով խիստ պատասխանաւորութեան ենթարկելու երկրւոյ, հալ-լուսաւորչականներին ռուսաց լեզւով երդմնեցնելու, քանի որ, Մակար կաթողիկոսի կարծիքով, հալ-լուսաւորչական եկեղեցու բոլոր ծէսերը պէտք է կատարեն հայոց լեզւով:

«Դորանից չետու, մանաւանդ վերջերքս, լիշեալ սինոդի դատախազի և սինոդի միջև տարաձայնութիւններ ծագեցին թէ ինչ լեզւով պէտք է երդմնեցեն հարկաւոր դէպքերում ռուսապատակ հալ-լուսաւորչականները առհասարակ և, մասնաւորապէս, ով նոցանից զիտէ ռուսաց լեզուն: Աչդ տարաձայնութիւնները աչնպիսի բնույթ

ստացան, որ ներկալ տարաւ լուսարին իշխան-կառավարչապետը ալդ առարկալի համար արարեցութիւնների մէջ մտաւ ներքին գործոց միջխորի հետ:

Եւ հետոյն շորա, կառավարչապետի շիւանում ալժմ ստացւած է միջխորութիւնից ծանուցումն ալն մասին, թէ ոչ-ուղղափառ շաւանութեան անձերի ինչ լեզուով երդմնելու խնդիրը հասել է ի քննութիւն կառավարիչ Սենատի և, ուկազով 17-ից անցեալ փետրուարի, 1816 համարով, Սենատը պարզարանել է հետեւեալը:

«Րադ Իժէ. 185 քաշաքաց. ծառալութ. կանոնադրութեան (հրատ. 1876 թ.), երդումը ծառալութեան հաւատարմութեան համար կատարւում է զինուորական և քաշաքացիական ծառալողների կողմից ընդհանուր կանոններով և ալն ձեռով, որ ցոյց է տրւած հիմնական օրէնքների Կ-դ չաւելածում. ալդ օրէնքների 34-րդ Իժէ-ւածի զօրութեամբ, որին կցած է լիշեալ ձեւը, ամեն ոք երդմնում է իւր հաւատի ու օրէնքի համեմայն: Իսկ ինչ վերաբերում է ալն խնդրին թէ ինչ լեզուով պէտք է արտասանեն ալակրօնները լիշեալ երդումի խօսքերը, ալդ մասին գործող օրէնքների մէջ առանձին որոշումներ չկան: Բայց օրէնքի ալդպիսի լուծիւնը անճշդութիւն և թերակատարութիւն չէ, որովհետև Ռուսաց կաշարութեան մէջ մի հատ պետական լեզու լինելով—ռուսերէնը,—կանկածի տեղիք չկալ, որ չիշեալ երդումը պէտք է կատարել ալդ լեզուով, մանաւանդ որ երդման խօստումի ընդգիրը ռուսերէն է հրատարակւած և ալ լեզուներով թարգմանութիւններ չունի: Գործող օրէնքների իմաստով՝ բոլոր պետական աքորերում ուսուց լեզւի պարտադիր լինելը կազմում է մի ալնպիսի հիմնական և ալն էլ ընդհանուր կանոն, որը ամեն մի դէպքի համար կարօտ չէ առանձին օրէնադրական հատարութեան, և, ընդհակառակը, ալդ ընդհանուր կանոնից ամեն մի շեղում կարող է թուլատրւել ոչ ալ կերպ բայց եթէ օրէնքի առանձին որոշմամբ ալդ առարկալի մասին: Երդման լեզւի մասին մի ալդպիսի բացառութիւն ներկայացնում է միայն ալն որոշումը, որ արւած է Օրէնքների ժողովածուի 1022-րդ Իժէ-ւածի մէջ, հատոր IX, հրատ. 1876 թ. որի հիման վրայ օտարերկրացիների (==иностранные) երդումը Ռուսիային հպատակ լինելու համար ամեն ոք տալիս է իւր հալրեհի կամ ալ՝ իրեն ծանօթ լեզուով: Ալդ պատճառով Սենատը ընդունեց, որ ալ շաւանութիւնների անձերը, զօրաց ծառալութեան նշանակելիս և առհասարակ պետական ծառալութեան մրհելիս՝ պէտք է երդմնեցեն ռուսաց լեզուով, բացի եթէ նոքա բոլորովին չգիտեն ռուսաց լեզուն, երբ պէտք է օգտւել թարգմաններից:

«Սենատի վերալիշեալ քացատրութիւնից տեսնելով, որ Մակար

կաթողիկոսի վերադարձից հետո կարգադրութիւնը հակառակ է գործող քաղաքացիական օրէնսդրութիւններին, որոնք պատրաստուած են հայ-լուսաւորչականներին երդելու ուսումաց լեզուով, և ի նկատի առնելով որ այս պատէշները չկատարելը նոցա կողմից բնականօրէն պէտք է հարց ծագեցնի ալէ անձերի պետական ծառայութեան մոտեցումը իրաւունքի մասին, եթէ կարելի չէ ապա ալէ ծէսի կատարումը չանձնել քաղաքացիական իշխանութեան, ինչպէս, օրինակ, զինւորական ծառայութեան մոտեցում համար, — ներքին գործոց մինիստրը Դիմեց կաթողիկոսին առաջարկով՝ վերացնել Մակար կաթողիկոսի յիշեալ կարգադրութիւնը, նամանաւանդ, որ վրաստանի և Պարսկաստանի մի քանի տեղերում, աւելորդի հաւերի իրենց լեզուն չգիտեցաւու համար՝ հայ-լուսաւորչական քահանաները, որպէս չափնի է, ժամաստայութիւնը (=догосудженіе) կատարում են ոչ հին գրական հայոց լեզուով, ալ տեղական բարբառներով, և որ, հետեւապէս, հայոց լեզուն հայ-լուսաւորչական եկեղեցու միակ կանոնական լեզուն չէ:

Կաւկազ լրագրի մէջ տպած վիշեալ տողերից վերջինների առթիւ պարտաւոր ենք ասել, որ, մեր գիտութեամբ, հայ-լուսաւորչական եկեղեցու ժամաստայութիւնը ոչ մի տեղ չի կատարում ալ լեզուով քան ինչ լեզուով որ գրած են հայ-լուսաւորչական եկեղեցական գրքերը, և որ հետեւապէս ալէ ակնարկած վերջին տողերը մեզ ուղղակի զարմացնում են:

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ եղած է նոր կարգադրութիւն, որով ալէ գործերը հայ-լուսաւորչականների համար, պէտք է քննէ և վճռէ Ս. Էմիանովի Սինոդը, քանի որ ամուսնութիւնը զուր կրօնական գործ չէ ճանաչած:

ՊԵՐՃ ՊԻՕՇԵԱՆԻ ԶՕԲԵԼԵԱՆԸ, Մալխի 16-ին տօնեց վիպասան Պերճ Պօշեանի 40-ամեայ գրական գործունէութիւնը մի հանդիսով լոբելարի տանը, որը փոխարինեց հրապարակական ճաշկերութիւն: Յօդուածի կարգադրիչ չանձնաժողովի անդամներն էին՝ պ. պ. Մարկոս Դոլուխանեան, Եգոր Դաւթեան, Ալ. Երիցեան և Բժշկ. Բ. Նաւասարդեան: Պատուել էին իրենց ներկայութեամբ ի միջի ալոց քաղաքապետն պ. Գ. Եւանգուլեան, գրականութեան և մամուլի գործիչներից շատերը՝ հնրերից և նորերից և Ներսիսեան շպրոցի ուսուցիչներից շատերը: Հանդէսը բացեց կարգադրիչ չանձնաժողովի ուղերձով, որի հետ նորա նախագահ պ. Ս. Դոլուխանեանը չանձնեց խորհրդարին ստացած գումարների բանկալին չէքը (ընդամենը ստացւած է 8.615 ռուբլի Թիֆլիսից, Բաքուից, Մոսկուայից և ալ տեղերից): Ապա կարդացեց Վեհափառ Մկրտիչ կաթողիկոսի օրհնութեան կոնդակը, Նախկին պատրիարք Իգմբրեանին նամակը, Թիֆ-

լիսի հալոց թեմի առաջնորդի շնորհաւորութիւնը, ուղերձները՝ Հալոց Բարեգ. ընկերութեան, Թիֆլ. Հալուհեաց ընկ., Բաքուի հայ կանանց, Գէորգեան ձեմարանի, Ներսիսեան Դպրոցի և Շուշայ թեմական-Դպրոցի ուսուցչական խմբերի, պ. Գ. Սունդուկեանի, Գ. Բարխուդարեանի (որոնք իրենք ներկայ էին). պ. Ա. Երիցեան տեղ իւր մի գիրքը նւեր օգրեւարի որդուն. կարդացեցին հեռագրեր պ. Սմբ. Շահազիզեանի և շատ ուրիշների. Ապա խօսեցին Ա. Բալանթար, պ. Ղ. Աշտեանի և իւր կողմից պ. Յովհ. Թումանեանցը, Ա. Արասխանեանց, և կարդաց ոտանաւորով ուղերձ պ. Յար. Թումանեան. Ա. Բալանթարը չալոնեց, թէ Պռօշեանը գրեց Սօս և Վարդիթեր'ը երբ շեռ ևս գրաբարի ու աշխարհաբարի խնդիր կար, և որ Պռօշեանը միշտ գրեց զիւլի կեանքից.—Մօրճ'ի խմբագիրը երևան հանեց Պերճ Պռօշեանցի գրական գործունէութեան մէջ նկատելի ալ շատ բնորոշ երևութիւն, որ նորա մեծ վէպերը սերտ կերպով կապւած են հալ ամսագրերի հետ, ոչ միայն ալն պատճառով, որ ալ վէպերը տըպւած են ամսագրերում, ալ որ նոքա գրել են չափապէս ամսագրերի Դրամա և Դոցա համար. ալսպէս Սօս և Վարդիթեր'ը թէն սկսում է գրել Արտիստի երկի ազդեցութեան ներքոյ, բաւց շարունակում է չափապէս կռնկ'ի մէջ տպագրելու համար (1860 թ.). Դորա-նից անցնում է ամբողջ 16 տարի, և Պռօշեանը չի գրում ոչ մի վէպ, մինչև որ Փորձ'ի հրատարակելովը նա նորից կաշում է վէպին և արաւորում կռածաշիկ'ը, Շահէն'ը, Հացի խնդիրը. Փորձ'ի Դարեւելովը Պռօշեանի վիպագրութիւնը Դարձեալ կանգ է առնում, մինչև որ 7-8 տարի փորոյ հրատարակում է Մօրճ'ը, որի համար չափապէս գրում են Յեցեր'ը և Բլդէն. Նորա մեծ վէպերից միմիայն «Սկիզբն Երկանց» տպւել է ոչ ամսագրի մէջ, ալն էլ որովհետև Մօրճ'ում տպւելու համար չարմարութիւն չկար. Ալսպիսով Պռօշեանցը իւր վէպերով բացառապէս կապւած է ամսագրերի հետ, միշտ լինելով առաջին լուման տուր, թէն ալ գործունէութեան ծաւրերը իրար են կապում մի քանի տամեակ տարիներ:

Ապա ժողովականներին առաջնորդեցին Դէպի սեղանատուն, ուր նախաճաշին խօսեցին բազմաթիւ կենացներ, որով և վերջացաւ հանդէսը ցերեկաւ ժամ չուրջ 2-ին, թողնելով անջինջ տպաւորութիւն մի արժանաւայել հասարակական ցուցի ի պատիւ մի ալն-քան բազմաշխատ և մեծանուն գրական գործիչի. Շնորհակալութիւններ չալոնեցին կարգադրիչ մասնաժողովի նախագահ պ. Դուլումանեանին, որի ձեռնբեցութեան շնորհիւ ձերութեան չեմքը թեւկոխող հալ վիպասանը իւր բազմաշխամ գերդաստանով գոնում է նաև կեանքի ապահովութիւն, մի հանգամանք, որը անկեղծ ուրա-

խուժին պատճառեց չարգելի վիպասանին սրտանց ամեն բարիք ցանկացող ժողովականներին:

Հանդիսակատարութեան միջոցին չօրհնարը ամեն շնորհաւորողի ընծալում էր «Մեր խեչօն» պատւածքը, որ առանձին տպագրւած էր ալդ. առթիւ, նաև մի բորչիւր՝ կարգադրիչ կոմիտէի տպած՝ Պոսեանի կենսագրութեան համառօտութիւնը բովանդակող:

ՆԻԷՐՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ.

Գ. Մեղինեան (Թիֆլիս) կրակով թողել է Թիֆլիս քաղաքին մի գումար, որի գործադրութիւնը Թիֆլիսի խորհրդարանը, համաձայն կրակի, կարգադրել է այսպէս. 1) 6.000 ռ. վերածել տոկոսաբեր թղթերի, որոնց տոկոսներով որդեգիրներ պահել քաղաքի արհեստաւորաց շարքում չքաւոր հաշ-լուսաւորչական արհեստաւորների որդիները. 2) 15.000 ռ. վերածել տոկոսաբեր թղթերի և տոկոսները բաժանելով չորս մասի՝ ամեն տարի տալ չորս հաշ-լուսաւորչական օրիորդների (ամեն մէկին 142 ռ. 50 կ.), նոցա ամուսնութեան ժամանակ. 3) 3.000 ռ. ֆոնդ կազմել՝ քաղաքային շարքներ շինելու համար:

Ա. Ս. Գիրգիղեան (Նոր վախճանւած վաճառական, Թիֆլիս) կրակով թողել է Թիֆլիսի Սոլուակ թաղում ունեցած տունը իր կնոջը, իսկ սորա մահից յետոյ պիտի անցնի քաղաքին՝ որ ալդ. տան արդիւնքով որդեգիրներ պահեն Թիֆլիսի լուսաւորչական հայերից. բացի ալդ, կրակել է 500 ռ. Ներս. շարքին, 500 ռ. քաղաքային արհեստաւ. շարքին, 500 ռ. Թիֆլիսի վերալի հալոց գերեզմանատան եկեղեցուն, 300 ռ. Մացրանի Ս. Գէորգ եկեղեցու ծխական շարքին (Թիֆլ.), 300 ռ. Զգրաչէնի եկեղեցու ծխական շարքին (Թիֆլ.) և 500 ռ. Վարչաւալի կոշկակարական մի գործարանի ծեր ու կարօտ բանւորներին բաժանելու համար:

ՏԱՃԿԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԹԻՐԲԱՀԱՅՆԵՐ.

—Ռուսիայի սահմաններում գտնուող հաշ փախստականներին արտօնեալ մի տարին լրացած լինելով՝ տաճկական սահմանին մօտ ելած փախստականները, Իգդիրից, մալխի 1-ին, թեով 200 հոգի, ճանապարհ գցեցին դէպի սահմանը. բայց դաճիկ սահմանապահ պաշտօնեաները նոցա չընդունեցին, առարկելով թէ առ ալդ. կարգադրութիւն չեն ստացած իրենց կառավարութեան կողմից, Թիֆլիսից ելած կարգադրութեան համաձայն ալդ. փախստականներին ցրուեցին իրենց տեղերում, ցնոր կարգադրութիւն, Նոյնպէս վերադարձան իրենց նախկին տեղերը Նրեանից ու ալ տեղերից Տաճկաստան վերադառնալու համար ճամբալ գցած փախստականները:

—Գերմանիայում, Թիւրքիայի հայերի օգնութեան համար 1896-ի

տեպոեմբերից մինչև 1899-ը հաւաքւած է 1.800.000 մարկ (շուրջ 800.000 ռուբլի), տարեկան մսխւում է մօտ 350.000 մարկ, որով պահւում են մինչև մօտ 4.000 որբեր:

ԿԱԹՈՒԼԻԿՈՒԹԻՒՆԸ ՎԱՆՈՒՄ: Հայ կաթողիկոսների պատրիարքական փոխանորդ հ. Անդոն ձեռնդրեցին մի տեղեկագիր է գեղեղել Քրիստոսի հայր Շարմրոյանի Oeuvre d'Orient-ի մէջ, որից երևում է թէ 1) կաթողիկոսեան շիւթած հալ-լուսաւորչականները առ ալդ մշւած են հացի կարօտութիւնից և կաթողիկոսների մօտ հաց ճարելու ակնկալութիւնից. 2) կաթողիկոս շաւանութիւնը ընդունելու համար մինչև շեկ-տեմբերի կէսը 1898 թ. գրաւոր չափարարութիւն են տւել 30.000 հոգի լուսաւորչականներ, որոնք ցրւած են քաղաքում և 126 գիւղեղերում (Վանում Կորդար և երկու ալ թաւեր). 3) Ալդ չաջողութեան համար Պապը շրկած է եղել Նպաստ 20.000 Քրիստոս, Նոր թեմի սկզբնական կարիքների համար. 4) Յիշալ թիւց 12.000 հոգուց աւելի արդէն արձանագրւած են թիւրք կառավարութեան պաշտօնական գրքի մէջ, որով միաջն պաշտօն ապէս հաստատուում է կրօնափոխութիւնը, քաղաքացիապէս բաժանելով շարժողներին՝ հալ լուսաւորչական համայնքից. 5) ալդ գործը հեշտացնելու համար թիւրք կառավարութիւնը ցոյց է տւել բարեհաճ որամաշրութիւն. 6) Քրիստոսական հիւպատոսը օգնել է ալդ գործին առ ի պաշտօնէ. 7) հալ-լուսաւորչականներին, իրենց կուլի մէջ կաթողիկոսեան շեմ, աջակից են բողոքականները (ամերիկացիք, անգլիացիք ու վերջերս նաև գերմանացիք), ալ և ռուսաց հիւպատոսը:

Հաշորդելով ալ տիւղիկութիւնները պարտաւոր ենք չաջոնելու, որ Ներկալիս իրականութիւնը չպէտք է որ համապատասխանէ վերը Ներկայացրած թւերին: Կ. Պոլսի հայոց Պատրիարք Օրմանեանը ազդու միջամտութիւն արաւ, յորդական թշնմի հետ միաժամանակ, որ խմբագրութեանս ևս շրկւած է, պատրիարքը կարօտեալներին օգնելու յորդորը կարդաց, որին ամենուրեք ճանկաստանից ձայնակցեցին. կարևոր գումար ևս (12—15 հազար ռուբլի) վեհ. կաթողիկոսը շրկեց, որպէս և Սուլթանը մինչ 20 հազար ռուբլիով օգնութիւն տւեց, Գաւառափոխներից շատ շատերը, խմբերով, շարձեալ աղգալին եկեղեցու գիրկը շարձան: Յանկալի է, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը ալս ամենի մասին մի տեղեկագիր հաշորդէ մամուլին հրատարակութեան համար:

—«Արեւելք» լրագիրը, Վանի կարօտեալների օգտին պիտի հրատարակէր Մաշկաղարդին մի բացառիկ թիւ, որի արդիւնքը պիտի չափակցւէր Վանի կարօտեալներին: Բազմաթիւ անձեր ալդ առթիւ գումարներ էին շրկած չիշալ թերթի խմբագրութեան. խմբագրու-

թիւնք. սակայն, երեւի արտաքին արգելքի հանդիպեց և չարտարեց որ բացառիկ թիւը չպիտի հրատարակւի, իսկ այդ առթիւ ստացած գումարը՝ 9.138 լրուշ՝ խմբագրութիւնը լանձնել է Պարթիւրքարանին՝ իւր նպատակին գործադրելու համար:

ՌՈՒՍԱՑ ԶԱՄԱՍԱՐԱՆՆԵՐԸ. Կառավարութիւնը «Պետական Համալսարան»ի մէջ հրատարակեց մի շարք ընդարձակ տեղեկագիր բոլոր բարձրագոյն դպրոցներում տեղի ունեցած անկարգութիւնների մասին: Հազարաւոր ուսանողներ մասամբ բոլորովին, մասամբ ժամանակաւորապէս արձակւած են և իրենց ծնոյնների մօտ շրջւած:

ԷԼԷԲՏԻՐՕ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ է բացւած Օդեսայում, երեք տարեայ դասընթացով. ուսման վճար 150 ռ. տարեկան, իսկ գիշերօթիկները, ուսման վարձը միասին, վճարում են տարեկ. 450 ռ.: Իւր տեսակում դա առաջին դպրոցն է Ռուսիայում:

ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍՍՏԻՈՒԹԻՒՆԸ Երևանի ուսուցչական սեմինարիայում, (պետական դպրոց է) որ մինչ այժմ վարձատրւում էր 1.395 ռուբլի ռոճկով, պետական խորհրդի որոշմամբ և բարձրագոյն հաստատմամբ իջեցւել է տարեկան 500 ռուբլու, հաշւելով հալոց լեզւի դաստափոխ 10-րդ կարգի պաշտօնեայ: Նոյն ռոճիկն ու աստիճանն է նշանակւած թուրքերէնի ուսուցչին: Հայերէնի համար խնայւած գումարով պիտի հաստատուի նկարչութեան, գծագրութեան և գեղագրութեան համար պաշտօն և վարձատրութիւն տրւի դպրոցի բժշկին:

ՌՈՒՍԱՑ ՄԱՄՈՒԼ:

«Ռոսսիա» ամենօրեայ մեծ թերթ, խմբագրութեամբ պ. Սազոնովի, սկսեց լոյս տեսնել Պետերբուրգում: Պր. Սազոնովը հալերիս չափորն է այն մեծ չօղածներով «Ռուսսկայա Մըսլ» ամսագրում, Հալերի մասին, ուր նա, կուեւրով Նովոե-Վրեմիա՝ չարձակմունքների դէմ՝ ի միջի ալլոց ապացուցանում էր Հալերի զխաւորապէս երկրագործ ու արհեստաւոր ժողովուրդ լինելը, հիմնւած պաշտօնական վիճակագրութիւնների վրայ: Խմբագրութիւնը իւր առաջին Նախ-չօղածների մէջ խօսում է Ռուսիայի «ծալրի երկիրներին» (օկրաինա՝ ներ) մասին այս կերպ. «Մենք հասկանում ենք ուսանցիւր բացառապէս այս միջով որ ուսանապատակ ալլազգիների մասսաների մէջ արմատանալ ուսանց պետականութիւնը, որը նոցանից ոմանց դեռ ևս խորթ է, այն է՝ տարածել նոցա մէջ կարելիին չափ հանրառական օրէնսդրութիւնը, հանրառական օրէնսդրութիւնը, հանրառական հաստատութիւնները՝ կառավարչական և հասարակական, երդեալների համառուական դատարանը և հանրառական կըրթութիւնը: Ընդունելով պետական կրթութեան միութիւնը իբր կա-

Նոնաւոր քաղաքական կարգ ու կանոնի անհրաժեշտ պայման, մենք բնականաբար, ենթադրում ենք, շորա հետ ի միասին, որ պետական շարժում—որպէս նաև շարժարանական և ալ կառավարչական հաստատութիւնների մէջ—պիտի տիրապետի նաև պետական լեզուն: Դպրոցը տալիս է պետական իրաւունքներ, ալի ստանալու համար ռուսահայտակը, ի հարկէ, պէտք է ամենից առաջ ալի լեզուն գիտենալ: Բայց մենք բնաւ չենք ընդունում ալի կեղծ-ազգասիրական հայեացքները, որոնց հասաձայն մեր ծալրի երկիրների տեղական բարբառները գրեթէ կտորակալէն չքանան և փոխարինւին պետական լեզուով նոյն իսկ մասնաւոր և առօրեայ շարաքերութիւնների մէջ: Ծառակելով ռուսաց քաղաքակրթութեան՝ մենք լարգում ենք ալի ազգերի քաղաքակրթութիւնը, որոնք մտնում են համառուական գերշատտանի կազմի մէջ. շարգում ենք նաև կուլտուրական գործիքների բարձրագոյնը—լուսաւորած ազգի կենդանի բարբառը՝ թէ խօսակցականը և թէ գրականը: Ռուսիան հպարտութեամբ կարող է ցոյց տալ իւր պատմութեան էջերում, որ նա չի հանգցրել իրեն հպարտակ ազգերից ոչ մէկի լեզուն, և որ նորա թեւերի տակ փեղուր են բռնել ոչ միայն հայրենի բանաստեղծներ և մտածողներ՝ Պուշկիններ, Տոլստոյներ, ալ և որդեգրած զաւակներ, որպէս լէ: Միցկեւիչ, վրացի Ակակի Ծերեթելի, հայ Բաֆֆի և ալնոյ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ, Կովկասի կառավարչապետի շիւանատան շրեկտոր գաղտնի խորհրդական Յ. Վ. Միցկեւիչ նշանակւած է կառավարչապետի խորհրդի անշամ. նալն շիւանատան փոխ-շրեկտոր իսկակ. պետական խորհրդական Ի. Նա. Սանդրըգալժո նշանակւած է շիւանատան շրեկտոր:—Պր. Միցկեւիչը երեսուն տարալ պետական ծառալոլ է Կովկասում, իսկ Պ. Սանդրըգալժո միայն կառավարչապետ իշլս. Գուլիցինի Կովկաս գալովը Կովկաս եկաւ:

ԹԻՖԼԻՍ, Վաճառականների ժողովը վճռեց առեւտրական ուսումնարանը բանալ սեպտ. 1-ին:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Թիֆլիսում հիմնւում է «Անշըրկովկասեան մանուֆակտուրալին ընկերութիւն»-ը, Ալ. Մանթաշեանի նախաձեռնութեամբ և երեք ալ առեւտրական տների մասնակցութեամբ, 1¹/₂ միլիոն շրամաղխով:

ՔԱՂԻՅԵՒԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԽՆԴԻՐԸ, Խնդիրը նրանումն է, որ Բաքալ լալտնի մեծահարուտ և ձեռնարկող թուրք Հալի Զէնալ Թաշիեը կաղմակերպել է մի բաժնեւոր ընկերութիւն Բաքում՝ բամբակի գործւածքների գործարան հիմնելու, որի համար նա կառուցել է մեծամեծ շէնքեր Բաքալ ժողածոցի ափում՝ Ահմեդլի և Զըլս թուրք գիւղերի (արլունապատկան, գիւղացիներին իւր հողաբաժին տւած) հողերի

վրայ, առանց օրինաւոր թուղթութեան պաշտօնաւոր իշխանութեան կողմից, Գործը իւր համարձակութեան, Դրամագլխի մեծութեան և վիճելիութեան համար անքան հեղաքրքրական է, որ աւելորդ չենք համարում խնդրի հետ ծանօթացնել մեր ընթերցողներին, օգտւելով Բաքաւ Նահանգի և Գաղստանի պետական կալածների կառավարիչ պ. Կ. Ա. Շապոշնիկովի մի պատասխանից (Կաւկազ № 94), որ նա ստիպւած է եղել տալ Տիֆլիսսկի Լիստոկ թերթում Խ. Խ. ստորագրութեամբ «Ձուր խարդաւանքներ» չօրւածի առիթով:

Պր. Թաղիւսը իւր մեծ գործարանի համար վերցնում է չիշեալ երկու գիւղերից (Բաքաւն կից) նոցա բնակիչների համաձայնութեամբ 198 շէսեալին անագին տարածութիւն հողը կապալով, 30 տարով, (պաշմանը նորոգելու շէպքում՝ 60 և 98 տարով) սաթէնը (թէ շէսեալինը) 10 ռուբլի տարեկան վարձագինով: Այդպիսի կապալ վաւերական լինելու համար, պէտք էր սակաւ որ հասարակաց միջոց հաստատի արքունական հողերի կառավարութեան կողմից, որը արքունական հողերի օրինական պաշտպանն է. բացի այդ, մինչ-ստորների կոմիտէի 9-ն փետր. 1890 թ. բարձրագոյն հաստատուած կանոնի համաձայն «Ապշեթոնեան թերակղզու բոլոր հողերը ճանաչւած են որպէս կանխաւալտ նաւթաբեր հողեր», և այդ կանոնը նորից հաստատւեց սույն 1899-ի փետրւարին. Արդ. պ. Թաղիւսը իւր շինութիւնները սկսել էր կառուցանել չունարին 1898 թ., և նոյն ամսի 19-ին պետ. կալւ. կառավարիչը նահանգապետից խնդրեց չորով տալ, որ մասնաւոր անձերը (Թաղիւս և ընկ.) ձեռք գցեն ծովափնեայ հողերը, որոնց մասին գրադրութիւն էր սկսած քաղաքին: Կանձնելու համար Պր. Թաղիւսը միայն 15 մալիսի, ալսինքն 4¹/₂ ամիս չեղող խնդիրք տւեց պետ. կալւ. կառավարութեան իւր կապալով վերցրած հողի մասին. պետ. կալւ. կառավարիչը երկրաչափին կանձնեց այդ հողերը չափել իսկ 15 չուլ. երկրաչափը ներկայացրեց կատարողական զեկուցումը: Նրբ. Դուրանից չեղող մինչև 9-ն սեպտ. պետ. կալւ. կառավարիչը ծառայութեան գործերով նահանգումն էր և Բաքու վերադարձաւ, նա կարելի չհամարեց վաւերացնել կապալի գործը, մասնաւոր որ քաղաքագլուխը (պ. Իրեկլի՛ն և ապա Բելեւսկին) երկու անգամ խնդրել էր թուլ չտալ քաղաքին հաւնելիք հողերի համար մասնաւոր անձերի և գիւղացիների միջև պաշմանագրութիւններ. բաց երբ պետ. կալւ. կառավարիչը առաջարկեց պ. Իրեկլիցուն ստորագրութիւն առնել գործարանատէրերից (Թաղիւս և ընկ.), որ եթէ քաղաքին կ'որւի ծովափի հողը, գործարանատէրերը պիտի հնթարկեն բոլոր պաշմաններին, որ կը շնչին այդ առթիւ Պր. Իրեկլին ոչ միայն հրաժարեց այդ առաջարկը ընդունելու ալ և

Պետերբուրգ գնաց անձամբ խնդրելու պ. մինիստրից, ծածկելով սուրբանից աչն, որ աչդ աչն հողն է, որը քաղաքին տալու համար ինքը խնդրամատուց է եղել, և սխալ է զեկուցել, թէ իբր թաղիւնը որոշեալ ժամանակամիջոցով պալմանաւորել է արտասահմանեան գործարանագրէրի հետ (մեքենաների պատէրնների համար), մինչդեռ նոցա հետ կապած պալմանների համաձայն՝ թաղիւնից էր կախած մեքենաներ ընդունելու ժամանակամիջոցները որոշել, Գեկտեմբերին 1-99 թ. նահանգական կառավարութիւնը խնդրամատուց եղաւ թույլ տալու որ գործարանը շինւի, առաջուց պարտաւորցնելով ենթարկել հողից օգտւելու բոլոր աչն պալմաններին, որ հարկ կը շատի մշակել մինիստրութիւնը։ Ուրեմն 11 ամիս անց էր կացել գործարանը շինելու սկզբից և 7 ամիս էր անցել աչն օրից երբ գործանադէր ընկերութիւնը խնդիրք էր տւել իւր հուպին կապալը վաւերացնելու համար, որ հազիւ միաչն շեկտ. 1898 թ. օրինական խնդիրք տրւեց գործարանը շինելու համար՝ պարտաւորութեամբ հպատակել մինիստրութեան պահանջներին։ Չնայած դրան, առ 22 յունւ. 1899 թ. արդէն շինւած էին՝ 1) գործարանի գլխաւոր քարէ շինութիւնը 100 սաժէն երկարութեամբ և 50 սաժէն լայնութեամբ. 2) քարէ շինութիւնը ելեքորական կապարանի համար ծխնելուղով 27 սաժէն բարձրութեամբ. 3) վարչութեան համար քարէ շինութիւն 35 սաժ. երկ. և 10 սաժ. լայն. 4) քարէ շինութիւն 40 սաժ. երկար և 3 սաժ. լայն—ախոռների, սարալի, և ծառալոյների համար. 5) փայտէ շինութիւն 4 սաժ. հրկարութեամբ և նոյնքան լայնութ., 6) նաւամատուց 160 սաժէն երկար և 2—5 սաժէն լայնութեամբ։

Այդ դեռ ինչ է անում պ. թաղիւնը (միշտ ըստ պ. Շապոշնիկովի). նա ներկայացնում է նահանգական արեանը մի պլան, որ կազմել է ճարտարապետ պ. Սիմոնսոնը և վկայել (завѣрился) պ. Իրեցկին (նախկին քաղաքագլուխը). աչդ պլանի մէջ ցուց է տրւած թաղիւնին «պատկանող» ծովափնեաչ հողը, և իբրև թաղիւնին «պատկանող» գցւած է աչդ հողերի մէջ գիւղացիների հողաբաժինները և աչն հողերը, որոնք գտնւում են արքունիքի անմիջական սեփականութեան ներքոյ։

ԿԵՆԴԱՆԻ ԽՕՍԲԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ. Մեր թղթակից պ. Աւ. Դաւթեանցը, շէպք ունենալով լինել Գանձակ քաղաքում, հաղորդում է մեզ հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները ծաղիկ պատաաստման գործի վերաբերեալ Գանձակ քաղաքում, ուր, ինչպէս երևում է, հաչ ժողովուրդը նոյն իսկ թուրքերից անհասկացող է, չհաւատալով մի աչնքան փորձւած միջոցին, որպիսին է ծաղիկ պատաաստումը։

Յունւարի 1-ից մինչև ապրիլի 7-ը պատաաստւել են՝ հաչերից 152 հոգի. ռուսներից 18 հ., թուրքերից 1,143 հոգի։

Ապրիլի 7-ից մինչև 9-ը պատրաստուել են՝ հայերից 246, ռուսներից ոչ ոք, թուրքերից 56: Ուրեմն ապրիլի 7-ից միմիայն 3 օրում հայերից անհամեմատ աւելի են պատրաստուել ծաղկից, քան նախընթաց 6 օրում: Պարծառը այս իրողութիւնն է, որ ապրիլի 7-ին տեղի չաջորդ Բագրատ վ. Գէորգ-Թաւաքալեանցը հոծ բազմութեան առջև եկեղեցում ազդու քարոզ է խօսել՝ ընդդէմ Գանձակի հալ ժողովրդի ունեցած նախապաշարմունքի ծաղկի պատրաստման մասին,

Թուրքերի առաւելութիւնը ծաղկի պատրաստման նկարմամբ չպէտք է վերագրել թուրք ժողովրդի թւի մեծ առաւելութեան: 1886 թ-ի մարդահամարով թուրք բնակիչների թիւն էր այդ քաղաքում մօտ 11.150 հոգի, հայերինը՝ 8.914, ռուսներինը՝ 131 հոգի: ԴՈՒՍ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆԳՐԿՈՎ ԿԱՍՈՒՄ: Անցեալ տարւայ Մարձի № 10-11-ում (էջ 1620) հաշորդել էինք, որ Գանձակի նահանգի Զիւլաճիւրի գաւառի Զանեաթալ հալ գիւղի մօտ գտնուող պետական ազատ հողերում հիմնուել է ռուսաց նոր գա. թականների մի գիւղ, և միւսը Թարթառ աւանում, որը Զիւլաճիւր գաւառի վարչական կենտրոնն է, ուր ապրում են ծառայողներ և առեփարկաններ (այդ տեղերը նախկին հալոց Զրաբերդ երկրումն են): Թարթառի ռուս գաղթականներին, բացի տեղի ջրարբի հողերից, տրւած են նաև Զալլի և Շհար-երի կոչւած պետական ազատ հողերը, որ խոտատեղի են: Թէ Զանեաթալի և թէ Շհարերի ազատ հողերը առաջ ծառայում էին Զանեաթա.ում ելած պետական ձիաբուծական ակոռատան, որը նախ Ոսկանապար և ալժմ Թիֆլիս է փոխադրւած. այդպիսով Զանաթալի պարապ մնացած հողերը վերջին տարիներս տրւում էին կապալով՝ նոյնանուն գիւղի բնակիչներին, Շհարերի ազատ լեռնական հողերը՝ Մեծ-Շէն և Մաղաւուզ հալ գիւղերի բնակիչներին. ալժմ այդ հողերը չտրակցրած են ռուս գաղթականներին. Լրագրերից ալժմ իմացում է, որ այդ հողերում լիչեալ երեք հալ գիւղերը անցեալ աշնանը ցանքսեր են արել. Գանձակի նահանգապետ գեներալ-մայոր Կիրէեւը նորերս առաջարկեց լիչեալ երեք հալ գիւղերի բնակիչներին, որ իրենց այս տարւայ բերքը, այդ կապալով վերցրած հողերից, կիսեն ռուս դաղթականների հետ. գիւղացիները ընդունեցին, չնայած առաջարկի ծանրութեան որովհետև այդ հալ, գիւղացիների այս տարւայ ցանքսերի մեծ մասը հէնց այդ կապալով վերցրած հողերումն է:

ԴՈՒՍՈՐՈՐՆԵՐԻ ԳԱՂԹԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻԿ շարունակում է: Յալոյի է արդէն, որ Անդրկովկասի շուրջոքները անցեալ տարի գաղթեցին մասամբ Կիպրոս կղզին, մասամբ Կանադա: Ալժմ, այս ապրիլ ամսին Կարսի երկրից Բաթում ուղևորեց 1.300 հոգուց բաղկացած մի

խումբ կանաչա փոխադրելու համար, որի համար նոքա վարձել են անգլիական ճաւ 67.000 ռուբլով:

ԹԻՖԼ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ապր. 13-ին քաղաքային խորհրդարանի շահլիճում ունեցաւ իւր տարեկան ընդհ. ժողովը: Ժողովը ներկայացնում էր բաւականին ողբալի տեսարան. քիչ անդամներ ներկայ էին, և ընտրութիւններին ներկայ էին հազիւ 25 հոգի, որոնք պիտի ընտրէին 8-10 հոգի վարչութեան և խմբագրական մասնաժողովի անդամներ: Նախագահում էր նոյն ժողովի համար ընտրւած պ. Յովս. Ամիրխանեանը: Ժողովի պարագմունքներից քիչեք հետեւեալները: Անդամ Արասխանեանց չափոնեց, որ տպագրւած տեղեկագրերի մէջ տպւում են ընդհանուր ժողովների արձանագրութիւնները ոչ ալն ձեով ինչպէս նոքա ուղղւում են չաջորդ ընդհանուր ժողովում, ալ տպւում են ալն սխալ ձեով, ինչպէս նոքա սկզբնապէս կազմում են ժողովի քարտուղարը և նախագահը. ալնպէս որ ուղղելիքները մնում են և տպւում միալն չաջորդ տարւալ արձանագրութեան մէջ: Այս չափարարութեան դէմ խօսելիք գտաւ անդամ Բաբախանեան (150 անւանեալ), Արասխանեանցին հակառակած լինելու համար. ժողովը, ոտկալն, պարտաւորեց ալտուհտի տպել արձանագրութիւնները ուղղած ձեով: Զեկուցեց մրցանակաբաշխութեան մասին, որ սահմանել է վարչութիւնը (300 ռուբլի տարեկան) ալն գրւածքների համար, որ լաւագոյնը կը դատւին խմբագրական մասնաժողովի կողմից որոշած թեմաների վերաբերեալ: Մրցանակի մասին ժողովը գրեթէ միաձայն ընդունեց վարչութեան առաջարկը. հակառակ եղաւ միմիալն անդամ Արասխանեանցը, որը գտնում էր որ 1) մրցանակաբաշխութիւնը կատարւում են միալն գիտնական մարմինները, իսկ Թ. Հ. Հրատ. ընկերութիւնը գիտնական ընկերութիւն չէ, և ալք ընկերութեան ընդհանուր ժողովի անդամները, որոնք և ընտրում են խմբագր. մասնաժողովի անդամներ, միմիալն 6 ռուբլի վճարող անհատներ են, իսկ ալքպիսի անցեղ ժողովներից ընտրւած մարմիններին չպիտի չափկացնել մրցանակ տալու հեղինակութիւնը: 2) Ընկերութեան խմբագրական մասնաժողովի անդամները ամեն տարի կիսով չափ փոխւում են. իսկ ալքպէս փոփոխական կազմով մի մարմնի, որը պիտի պարզեադրի մի աշխատութեան համար, որի թեման տուղը նախկին խմբագրական մասնաժողովն է եղել, չի կարելի վտրահել: 3) Թիֆլ. Հ. Հր. ընկերութիւնը տպւում է գրքեր, որոնք կարող են տարածել. մինչդեռ իւր արժանիքներով մրցանակի արժանի մի աշխատութիւն կարող է ճաւ ալնպիսին լինել, որը տպագրելու համար մեծ ծախք է պահանջում և վաճառելու էլ քիչ չոյսեր է տալիս. գիտական շահի և հրատարակ-

չական շահերի իրար հակառակելը, ալիքսի Դէպքերում, պէտք է անհրաժեշտորէն ստեղծի խմբագր. մասնաժողովի համար կեղծ Դիրք և մէլի նորան Դէպի անարդարութիւն. 4) Ընկերութեան կանոնադրութիւնը ընդունում է միայն սովորական վարձատրութիւն իւր տպած աշխատութիւնների համար, բաց ոչ նաև մրցանակով պարգևատրելը. (ըստ վարչութեան մշակած կանոնների՝ մրցանակով պարգևատրածը պիտի ստանալ նաև առանձին վարձատրութիւն տպագրական թերթերի հաշիւով):

Ժողովի վարչութիւնը առաջարկել էր որ աւստրիական ընկերութեան անդամներին (Դոքա վճարում են 6 ռ. տարեկան իւրաքանչիւրը) թէ ընկերութեան ընթացիկ տարում հրատարակած բոլոր գրքերը, որքան գումարի էլ որ սոքա լինին. Ժողովը, սակաւն, որոնց անդամներին տալ գրքեր 8 ռուբլու (փոխանակ 5 ռուբլու, ինչպէս ցայժմ էր), անդամին թողնելով գրքերի ընտրութիւնը:

Երբ ժողովի նախագահը առաջարկեց վարչութեան տպած հաշիւը վաւերացնել՝ ժողովի անդամ պ. Ալվազեան լալտեց որ չստուգած հաշիւները վաւերացնել չի կարելի և առաջարկեց վերատուգոյ լանձնաժողով ընտրել՝ հաշիւները քննելու համար: Այդ արդար, տարրական պահանջին ընդդիմութիւն ցոյց տւին վարչութեան նախագահ Ալ. Քալանթար, խմբ. մասնաժողովի անդամ և նախագահ պ. Լէօ-Բաբախանեան, թէ իբր «կանոնադրութեան մէջ չի լիչւած» հաշիւները ընդհանուր ժողովից ստուգելու մասին խնդիրը քէլի Դրեց և ձայնից փոքր մեծամասնութեամբ պ. Ալվազեանի առաջարկը մերժեց. և ընկերութեան ալիք «պատւաբեր» մեծամասնութեան մէջ էին վարչ. նախագահ Քալանթարը և վարչութեան ալ անդամներից ոմանք, որպէս նաև խմբագր. մասնաժողովից Լէօ-Բաբախանեանը և ալ անդամներ. ալիքն նոքա, որոնց ցոյց տւած հաշիւների վրա վերատուգոյթիւն պիտի նշանակւէր—նորպէս մասնակցեցին ձայնաւորութեան մէջ՝ մի ալիքան «անկարմար» առաջարկ տապալելու համար:

Եւ լաջողեցան!..

Այսպիսով ուրեմն Քալանթար, Բաբախանեան-Լէօ և նոցա ընկերները չթողլուին որ իրենց ներկայացրած հաշիւը քննութեան ենթարկի ընդհանուր ժողովից ընտրելիք անձերի կողմից:

Կարելի է երևակայել թէ ինչ ապշեցուցիչ տպաւորութիւն գործեց մի ալիքսի մեծամասնութեան վճիռը... Չընդունել հաշիւների քննութիւն!

ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԿ. Քուժայիսի նահանգում (первое товарищество шелководовъ Кутаисской губ.) իւր տարեկան ընդհանուր

ժողովը ունեցաւ ապր. 21-ին Կախի գիւղում, Հաշւից երևաց, որ ընկերութիւնը ունի 1516 անդամ, որոնցից ներկայ էին 304 հոգի։ Ընկերութիւնը կազմած է նոտարական պալմանագրով, որ կամենում են փոխարինել կանոնադրութիւնով։ Ընկերութիւնը առ 1-ն մարտի 1898 թ. ունէր 1) փալատը յրամներ 19.011 ա. 37 կոպ., 2) պահեստի յրամ 782 ա., 3) հիմնական յրամագլուխ 782 ա., 4) չվերցրած յրամներ (Դիւիդէնդներին) 671 ա. 60 կ., 5) զուտ արդիւնք 5.608 ա. 87 կ. ընդամենը 26.856 ա. 4 կ., իսկ առ 4-ն մարտի 1899 թ. ունէր 1) փալատը յրամներ 19.782 ա. 59 կոպ., 2) պահեստի 1.342 ա., 3) հիմնական 1.342 ա., 4) չվերցրած յրամներ (Դիւիդէնդներին) 1.431 ա. 55 կ., 5) պարտք 429 ա. 55 կ., 6) զուտ արդիւնք 4.190 ա. 97 կ., ընդամենը 28.518 ա. 66 կոպ.։

ԱՆԳԼՈՒՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ. Անգլիան և Ռուսիան համաձայնութեան են եկել Զինատրանում իրենց ունենալիք ազեցութեան շրջանների վերաբերմամբ։ Դորա համաձայն Ռուսիան տարածում է իւր ազդեցութիւնը չինական մեծ պարսպի հիւսիսային կողմից Դէպի հիւսիս՝ ռուսական սահմանները, ալսինքն Մանջուրիայում. իսկ Անգլիան՝ Եանկ-Յէ-Կեանգ գետի հովտի վրայ։ Ռուսիան նաև խոստացել է Մանջուրիայում մաքսային ազատական սակացոյց գործադրել։ Նաև երկաթուղին Թիէն-Յինից մինչև Նիւ-Չուանգ պիտի մնալ ռուսական ազդեցութեան տակ՝ սկսած չինական պարսպից, թէև անգլիական ճարտարագետներ պիտի արտօնեն ամբողջ գծի վրայ հակելու։

ԹԻԻՐԳԻԱ.

Քրդական խնդիր։ Պարիզի Temps լրագրին Կ. Պոլսից հաղորդում են թէ «Ռուսիայի գանգադներին պարծառով՝ Սուլթանը վճռեց իրիտ միջոցների Դիմել քուրդերի Դէմ, մանաւանդ Վանի վիլայէթում, և զրկել նոցա բոլոր արտօնութիւններից որ նոքա ցալժմ վաճելում էին»։ Բանը որ Թիւրքիային է գալիս՝ խնդիրը իրականացնելու մէջն է կաշանում, որի համար նոյն իսկ սուլթանի վճիռները բաւական չեն, որովհետև սուլթանը երկու տեսակ վճիռներ է կաշացնում՝ մէկը որ պիտի իրագործել տալ, միւսը՝ ոչ իրագործել տալու ալ միայն ընդդիմախօսին ժամանակաւորապէս լռեցնելու համար։

ԴԻԵՅՅՈՒՄԻ ԳՈՐԾԸ. ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ. Վճռաբեկ արեանը վերջացրեց յոկումէնդների և վիլանների ցուցմունքների քննութիւնը, Բալլօ-Բոպուէ պարրաստեց իւր զեկուցումը, որ և լանձնեց յատարապէ Մանսիւն։ Զեկուցման մէջ Բալլօ-Բոպուէ գալիս է ալն եղրակացութեան, թէ պէտք է վերաքննել Դիւիդէնդի գործը և որ գործի վերաքննութիւնը պիտի լանձնել մի ուրիշ զինւորական յատարանի։ Նա լալտնում է որ 1894 թ-ի յատարարութեան ժամանակ զինւորական յատարանի-

անդամները Ռրէֆօուսին ցոյց չեն տւել բոլոր վկայաթղթերը. իրաւագէտներ չլինելով՝ նոքա գործել են առանց զգալու. Նա ասաց, թէ վերաքննութեան հակառակորդներ ի կարծիքով նշանակութիւն չունի աչն թէ «Այդ կանաւիա Ռ...» Ռրէֆօուսին է վերաբերում թէ ոչ. նոցա կարծիքով բաւական չէ վերաքննութիւն նշանակելու համար նաև Հանրի'ի միջամտութիւնը պրոցէսի մէջ և նորա գործողութիւնները Պատի յը կլամի և Լստէրհազիի հետ. նաև հակառակորդների կարծիքով էքսպէրորի հակասութիւնները բաւականաչափ չեն խախտել վերջնական վճռի նշանակութիւնը. Նոցա ասելով Ռրէֆօուսի մեղաւորութիւնը ապացուցած է բորդըրօի բովանդակութեամբ. Բալլ-Բոպուէ եկել է, սակաւն, ալն եղրակացութեան, որ բորդըրօն գրել է մայոր Լստէրհազի:

Մանօ'ն ապա խօսեց մեղադրականը, որ չադոնում է որ երեւան հանած նոր ֆաքտերը անհրաժեշտ են դարձնում Ռրէֆօուսի գործի վերաքննութիւնը.—Ապա խօսեց Մոռնար, գալով նոյն եզրակացութեան, (20 մայիս հին տոմ.): Այժմ մնում էր որ վճիռ կալացնէր դատարանը:

Մայիսի 23-ին վճռաբեկ արեանը վճռեց բեկանել հին տ. 22 շեկտ. 1894 թ. Պարիզի առաջին զինւորական դատարանի արձակած վճիռը Ռրէֆօուսի դէմ, մեղադրադին լանձնել Ռէնն'ի զինւորական դատարանին, որը պիտի նշանակէր չարկապէս ալն հարցը քննելու համար թէ մեղաւոր է արդեօք Ռրէֆօուսը, որ 1894-ին մեքենաւորութիւններ էր անում կամ չարաբերութիւնների մէջ էր պետութեան կամ նորա գործակալների հետ, նորան դրդելու համար թշնամական գործողութիւններ կատարելու և պատերազմ սկսելու Ֆրանսիայի դէմ և կամ նորան առ ալդ միջոցներ դալու համար:

—Պատերազմական միջոցով Ֆրանսիան հրաժարական տւեց՝ զինւորական դատարանում տեղի ունեցած մի ցոյցից լեռոյ ուսանողների կողմից պրոֆեսորի դէմ, որը Ռրէֆօուսի առիթով կարծիք էր չադոնած մի լրագրում. Սրանով հինգերորդ պատերազմական միջոցով է որ Ռրէֆօուսի գործի պատճառով հրաժարական էր դալիս. Նորա տեղ նշանակւած էր Կրանց:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Խնդիր երկաթուղու Կասպից ծովից մինչև Պարսից ծոցը: Պետերբուրգի Պարսից դեսպան Միրզա-Ռիզա-խանը ալդ մասին հետեւեալն է հաղորդել մի գերմանական թերթի թղթակցի. «Կասպից ծովից Պարսից ծոցը երկաթուղի անցկացնելու ծրագիրը չլացւել էր դեռ ևս 1872 թւին, երբ անգլիացի Ռէյտերին արտօնութիւն տրւեց դրա համար. Պէտք է երկաթուղին սկսէր Արուշէրից Կասպից ծովի վրա:

մինչև Պարսից ծոցի Գէշտ նաւահանգիստը (==փորո), Ֆարսիստան նահանգում: Որոշած ժամանակամիջոցին կոնցեսիան չիրագործւեց և հետեւապէս կորցրեց իւր զօրութիւնը: Գորանից գէտ, մօտ քսան տարի առաջ ռուս գեներալ Ֆալկէնհագէն աշխարհեց նման կոնցեսիայի համար, բայց հարկաւոր դրամագլուխը չկարողացաւ հաւաքել: Մի քանի տարի առաջ ռուս ձեռնարկունները նորից նոյն կոնցեսիան ստացան, և որովհետեւ դորա ժամանակամիջոցը լրանալու վրայ է, ռուսի բնական է, որ ալժամ ինժեներները չափոնեցին ձեռնարկութիւնը իրագործելու և ուղին հետախուզելու համար: Այդ զուտ տնտեսական և կուլտուրական ձեռնարկութիւնը ոչինչ ընդհանուր բան չունի արեւելեան քաղաքականութեան լաւ հորիզոնների: հետո՛ Բոլոր մօլորութիւններն ու թիւրիմացութիւնները, որոնք երես են գալիս և միշտ էլ պիտի չափոնեն աչտ տեսակ բաներ հաղորդելով, պէտք է վերագրել մրցման զգացմունքին, որը մինչ վերջին ծալք աճել է մի քանի անգլիական շրջաններում: Մենք ոչ մի նշան չենք տեսնում (չարում է դեսպանը), որից կարելի լինի եզրակացնել թէ Ռուսիան իւր արեւելեան քաղաքականութիւնը կամենում լինի վարել ահա ուղղութեամբ, որը վտանգաւոր լինի Պարսկաստանի անձեռնելիութեան ու անկախութեան համար: Մանաւանդ որ մենք ունինք թէ Ռուսիայի և թէ Անգլիայի հետ ամենաշիտակ ու համակրելի շարաքերութիւններ և մենք վախենալու տեղիք չունինք:

— Մեկըն խան, պարսկահայ չափոնի դիպլոմատը, որը իւր վերանորոգիչ ծրագիրների համար տարիներ առաջ հեռացւեց Լոնդոնի դեսպանութեան պաշտօնից Նասրէ-դին շահի ձեռքով, և որը երբեք չաճած ապրում էր Պարսկում, ալժամ նշանակած է Պարսկաստանի դեսպան Հռոմում:

— Պարսկաստանում Գերմանիան, որպէս երևում է, կամենում է առևտրական հաստատ շուկաներ ստեղծել իւր ապրանքների համար: Գերմանական Արևոնա նաւը մտաւ Պարսից ծոցը, մեծ ունահանգստութիւն պատճառելով Անգլիացոց: Գերմանացիք աշխատում են կոնցեսիա ձեռք բերել Միջերկրական ծովից երկաթուղի անցկացնել մինչև Պարսից ծոցը: Մտադրութիւն կալ Համբուրգի և Բուշիւրի միջև, նաւալին երթեկութիւն հաստատելու, մինչդեռ ցալժամ ալդ կատարւում էր անգլ. նաւերով: Բուշիւրում Գերմանիան հիւպատոսութիւն է հաստատել և պատրաստւում է փոխ-հիւպատոսութիւն հաստատել Բէնդէ-Աբասում:

ՓՈՒՐԲԻԱ ՆԻ ԳԵՐՄԱՆԱՅԻՔ: Գերմանացիք շարունակում են իրենց կուլտուրական նաճումները Թիւրքիայում: Գերմանացիք ամենալոյս ջերմութեամբ շարունակում են իրենց նաճումները, Ն. Խա-

րուզինը, «Ռուսակա Մըլը» (==Ռուսական միտք) ամսագրում մի լուսանկարով «Ուրաղագիր Եւրոպացոց գործունեութեան Արեւելքում» խորագրով, նկարում է հետեւեալը. Անատոլիական երկաթուղին, որը գերմանացոց ձեռքին է, շար բան է արել օգնելու երկրագործութեան՝ գլծ անցկացրած տեղերում: Շինած է մի ամբողջ ցանց փորձնական շաշտերի և օրինակելի ագարակների՝ համապատասխան տնտեսական կարիքներին: Օրինակելի ագարակներից մի քանիսի կուլտուրական նշանակութիւնը կարճ միջոցում արդայապտեց: Սկսել են նորոգել շաշտերով բարձի թող արած ջրանցքները, մշակում են նոր բոսեր և մրգի ծառեր. և այդ ամենի ազդեցութիւնը ազգաբնակչութեան վրայ աճելով աճում է: Դեռ շար բան մնում է անելու, բայց մշտն փրկած է և գերմանական գաղթականութեան ալիքը շարունակում է առաջ գնալ փոքր Ասիայում—երկու երկիրների փոխադարձ օգտին: Նոյնպէս լաջողութիւններ են վաստակում գերմանացիք նաև Պարսկաստանում:

ՀԱԱԳ. ԿԱՄ ԼԱՀԵՅ ՔԱՂԱՔԸ. Խաշաղութեան վեհաժողովը, որը բացւած է ներկայ մայիսի 6-ին (ն. տ. 18-ին), զուժարում է Հոլանդիայի Հաագ քաղաքում, որ Ֆրանսերէն (և սորա հետեւողութեամբ նաև արևմտեան հայերէնով) կոչւում է La Haye (==Լա Հէյ==Լահէյ), իսկապէս նորա անունն է 's Gravenhage ('ս Գրաւէնհագէ): Դա՝ Հոլանդիայի թագաւորանիստ քաղաքն է, թէև գլխաւորը համարւում է Ամստերդամ քաղաքը (մինչ 350.000 բնակիչ), բայց Հաագը Հոլանդիայի թագաւորանիստ ուրեմն և կառավարութեան կենտրոն քաղաքն է և ունի շուրջ 150.000 բնակիչ: Գտնւում է Հիւսիսային ծովից 5 քիլոմէտր հեռու. ունի ընդարձակ հրապարակներ, պալատներ, պետական շինութիւններ, 17 եկեղեցի, թանգարան, գրադարան (աւելի քան 200.000 հարոր), քաղաքին մօտ է պուրակը (անտառը), ուր շինւած է թագաւորական զարճադղեակը, պուրակի տունը (Օրանեան սրահ), ղէպի հիւսիս արևմուտք գտնւում է ծովալին լողարան Շէւէնինգէն: Հաագում կալցեղ են մի քանի պատմական ժողովներ. ալսպէս կոչւած Հաագի կոնցերտում 1710 թ. մարտ 31-ին (ն. տ.) Դաշն կապեց Գերմանական (Աւորրիայի) կալսեր, Պրուսիայի թագաւորի, Ռուսիայի կալսեր (Մեծն Պետրոս) և ծովալին պետութիւնների միջև՝ Ֆրանսիայի ղէմ՝ Հիւսիսային Գերմանիայի չեզօքութիւնը պահպանելու համար. 1717 թ. չոււ. 4-ին աշնանը կապարեց երբեակ Նիդակակցութիւնը Ֆրանսիայի, Անգլիայի և Հոլանդիայի միջև ընդդէմ Իսպանիայի. նոյն թւականին փետր. 17-ին Հաագում կալցեղա հաշտութիւնը Իսպանիայի, Սաւոյի և Աւորրիայի միջև:

Հովանդիան, որի թագաւորանիստ քաղաքն է Հաապը, մէկն է Եւրոպայի փոքրիկ պետութիւններից, ընկած Պրուսիայի, Բելգիայի և Հիւսիսային (կամ Գերմանական) ծովի մէջ տեղ, 33.000 քառակուսի քիլոմէտր, մօտ 4¹/₂, միլիոն բնակիչ. գրեթէ ամբողջապէս սորոր հարթութիւն, ծովից էլ ցածր, որի շէմ պաշտպանւած է թումբերով, շատ բերրի. բաժանւած է երկու պրովինցի՝ Հիւսիսային պրովինց Ամստերդամ գլխաւոր քաղաքով, և Հարաւային պրովինց՝ Հաապ գլխաւոր քաղաքով.

Խաղաղութեան կոնֆերէնցը գումարւում է պուրակի շրջակում, որը զարդարւած է 17-դարի նշանաւոր նկարներով.

«ՄՇԱԿ» ՆՈՐ ՄՏՔԵՐԸ.

Շատ ու շատ տարիներ է որ Մշակը որոնում է առիթներ՝ «նոր մտքեր» չափոնելու, բայց վերջը միշտ մի ելք էր գտնում աչդ-դժար գործը իրենից թօթափելու համար, և աչդ-եւքը սովորաբար նա գտնում էր Սուրճի շէմ բարբաջելով. Բայց նորերս Մշակը վճռել է վերջապէս մի նոր բան չափոնել, «նոր մտքերով» ասպարէզ գալ. Եւ ահա գրւում է «Հին Ուրականը»։ Ինչու՞ն է բանը. հալ հոգևորականութեան շիրքի մասին է խօսքը. լսեցէք.

«Արշակունիները թուլացան, ջլադեցին ահն կուսի մէջ, որ (հալ քրիստոնեալ) եկեղեցականութիւնը վարում էր հեթանոսութեան շէմ...»

Եւ ինչու թէ՛ դորանով Հայերը «մի անփոխարինելի զոհ» տւին. Իբր թէ Հայերը չգիտի պաշտպանէին քրիստոնէութիւնը և պիտի ընդունէին հեթանոսութիւնը, Հասկանում էք? չպէտք էր պաշտպանել քրիստոնէութիւնը, որով, ըստ Լէօի, տկարացաւ Հայաստանը, Եւ աչդ-ճումն էր հարկաւոր. լսեցէք. Դա հարկաւոր էր —

«Կղերին, որ թագաւորել էր ուզում»...

Այո՛, ըստ Բաբախանեան-Լէօի, հալ հոգևորականութիւնը ազգի Դաւաճան հանդիսացաւ պաշտպանելով Հայաստանում քրիստոնէութիւնը (Ընթերցողը թող բարեհաճի կարդալ աչդ-երևելի միտքը Մշակում № 85)։

Անցնում են Դարեր. Կիլիկիայում հաստատւում է հալոց մի փոքրիկ թագաւորութիւն, Թէ Հռոմի պապը և թէ չունական Բիւզանդիան «աշխարհում էին միմեանց ձեռքից խլել աչդ-չալ որսը» (Կիլիկիան). բայց՝—

«հալ կղերը» (նա, որը, ըստ Մշակի, Մ Դարում ահնքան աններելի յանցանք էր գործել իւր սեփական շահի համար քրիստոնէութիւնը պաշտպանելով ընդդէմ հեթանոսութեան) «հալ կղերը, որ Փանադիկոսութեամբ և կուր եռանդով լեռ չէր

մնում իր անհաշտ մրցակիցներին՝ ոչինչ չխնայեց, որ երկու քուրդներն էլ ձեռնոռնացն մնան»:

Եւ ալի՜ մի նոր չանցանք էր. լսեցէք. լատիների ու լոն-օրթոդոքս-ների ձգտումների դէմ՝

«Հայերի աւանդութիւնների պաշտպան հանդիսացան Սիւնիքի, Շիրակի և Զորադեփի կղերանոցները: Սիւնիքում եկեղեցական ժողով գումարեց, որ գրեց կիլիկեցիներին. «հաւան ենք մեր հալւերի հետ դժոխք իջնել, և ոչ հոռոմների հետ երկինք բարձրանալ»: Իրանից հեռու էլ չէր կարելի դնալ»:

Ղէօ-Բաբախանեանը վերջին մեր ընդգծած խօսքերով ուղղում է սսել թէ կիլիկիայի հալութիւնը չպէտք է իւր աղգալին եկեղեցին պաշտպանէր, ալ պէտք է ընդունէր կամ լատին կամ լոնաց եկեղեցին:

Այնտեղ՝ չպէտք էր ընդդիմադրել հեթանոսութեան և պէտք էր զոհել քրիստոնէութիւնը, ալտեղ՝ չպէտք էր ընդդիմադրել կաթոլիկներին կամ նաև լոն օրթոդոքս եկեղեցուն ու պէտք էր զոհել աղգալին եկեղեցին:

Ափսոս որ Վարդան Մամիկոնեանի օրօք Մշակ չէր հրատարակում, ապա թէ ոչ՝ Բաբախանեան-Ղէօի ու Քալանթարի խորհուրդներով Հայերը զոհելով քրիստոնէութիւնը ընդունած կը լինէին Պարսից առաջարկած հեթանոսութիւնը, որով մի անգամից նաև աղաքւած կը լինէին ամեն հոգսերից՝ իրենց եկեղեցական անկախութիւնը չեղադադարեալով պաշտպանելու թէ՛ Հռոմալ պապից և թէ՛ լոնցերից: Պարզ ու հասարակ. Հայերը կը լինէին աշխարհիս ամենաբըջանիկները, նամանաւանդ որ, ալի՜ ռեցեպտի համեմատ, դեռ խնդիր էլ է թէ կը մնար աշխարհիս երեսին հալ անուշով մի աղգ թէ ոչ. և եթէ մնացած չլինէր՝ խնդիրը աւելի էլ պարզած կը լինէր: Հայերը, պարսկական հեթանոսութիւնը ընդունելով, մի քանի դար չեղող պարսիկների հետ միասին անշուշտ կ'ընդունէին Մահմէդի կրօնը և պարսիկների հետ միասին կը բաժանէին երկնքի արքայութիւնը: Մի խօսքով, հազար անգամ ափսոս որ Մշակ'ը իւր Բաբախանեանով ու Քալանթարով ալիքան ուշ են ծնւել մարդկութեան պատմութեան համար: Ահա ձեզ «նոր մոքեր», որոնց համար Մուրճ'ը պիտի անշուշտ շար նախանձի: Տեսնե՜ք թէ վաղը ինչ երգեր պիտի երգի Մշակ'ը հեթանոսութեան, քրիստոնէութեան, Վարդանի ու Վասակի և ալ ալսպիսի թեմաների մասին. համբերութիւն կ'ունենենանք սպասելու... Ալժամ գոնէ սա հաստատ է, որ Մշակ'ը նոր մոքեր ունեցել է, բայց խնամքով ծածկում է եղել: Հտոդ-հատոդ նա երևան կը հանի անշուշտ:

ՄԵԱԿ'ը, ձգտելով, ոնց որ ուռններն են ասում՝ ցաւոք գլխից առողջի

վրայ գցել, Պեշիկթաշեանի մասին պ. Իւրի Վեսելովսկու ուսմանը նուստնասիրութեան առիթով գրել է հետեւեալ տողերը՝ յատկապարտոշ Մշակի՝ ամբողջ 25 տարւայ անցեալը. «Մեր գծուծ ժամանակի վտիտ գործիչները, ասում է նա, որ ու գիշեր տքնում են իրանց պատմութիւնը գրելու համար, իսկ այն, որ արդէն պատմութիւն է, որ անցեալ է ներկայացնում, արհամարած է, անպատմութեան յատկապարտած»:

Ամենքին չափոյնի մի իրողութիւն է որ Մշակը իւր հրատարակելու օրից մինչև աչսօր՝ չի ճանաչել ոչ մի անցեալ. Ադ. թերթի մէջ, սկսած 1872 թւականի չունւարից lèse-majesté-ի լանցանք է համարւած անցեալ գործիչների անունները տալ, որ և է նպատաւոր մտքով, և ալէ նոյն ոգին Մշակը տարածեց նաև ժամանակակիցների նկարմամբ. պէտք էր չգիտենք ինչ մի արտաքուր կարգի ստիպմունք, որ Մշակ՝ ում ալ ու ալն անցեալ ու ներկայ գործիչի մասին մի տեղեկութիւն տրւէր, իսկ ուսումնասիրութիւն երբէք: Մշակի՝ պառաւական բարբաջմունքները լամենալն յէպս չեն կարող Մուրճի՝ յիպէլ. հէնց առաջին Ձե-ից Մուրճ-ը մի ուսումնասիրութիւն տուց Պոօշեանի գրական գործունէութեան մասին, առաջարկելով որոնել նշանաւոր վիպասանի 30-ամեայ յօբելեանը. Մշակ՝ ոչ միայն չեզօքաբար ընդդիմացաւ, ալ և քսու զրպարտութիւն արաւ Պոօշեանի վրայ նոյն ալն 1889 թւին խորդախաբար չակերտների մէջ առնելով իբր թէ «Յիցեր» վէպի մէջ գտնուող մի տողը. և նպատակն էր յօբելեանը խանդարել. բալց երբ ալ յօբելեանը ալոց ջանքերով թէև աւելի ուշ բաց որոնեց՝ Մշակի՝ խմբագիրն է որ շտապում է յօբելեանին ճառ խօսելու՝ ամենքին չափոյնի և հաղարանգամկրկնւածը Պոօշեանի արժանիքների մասին նորից կրկնելու: Մուրճի նոյն 1889-ին տրւեց կենսագրութիւնը Սունդուկեանի. չաջորդ տարիներում շատ հիմնաւոր ուսումնասիրութիւններ տրւեցին Լ. Պատկանեանի մասին 2 (կարդա երկու) անգամ, Ս. Շահազիզի մասին 2 (կարդա երկու) անգամ. մի շար հանգամանօրէն գրւած կենսագրութիւն հրատարակեց Պետրոս Աղամեանի մասին, մի ալ անգամ հրատարակեց նոյն Աշամեանի նամակագրութիւնների մի ամբողջ ժողովածուն, իբրև նիւթեր նորա անձնական և արտիստական կենսագրութեան համար. ուրեմն Աշամեանի մասին ևս Մուրճը տւել է մեծ գրւածքներ յարձնալ 2 (կարդա երկու) անգամ: Թողնենք, որ մի 10-եակ (կարդա տասնեակ) ուսումնասիրութիւններ են տրւել Մուրճի մէջ մեր ժամանակակից երիտասարդ գրողների մասին: Այսպէս ենք սկսել Մուրճ-ը, աչսպէս էլ շարունակում է ալն լոյս պիտելու գործը, անցեալի ու ներկայի մասին որի յէմ Մշակը թումբեր է կամեցել

կանգնեցնել, մի Ժամանակ՝ բաւականին յաջողութեամբ, ալժմ, աւել
գլխաւորապէս ալ ևս ոչ չաջողութեամբ... Եւ ալս նոյն 90-ական
թւականներին էր որ կարելի եղաւ, նաև Մուրճից Ղուրս, ան-
ցեալը լալորնի կացուցանել. Արովեանը սկսեց հեղափոխել Դինսա-
գաբար, ճաշակ արթնացաւ Արովեանը հասկանալու. ու նորա նա-
նաւոր երկի երկրորդ տպագրութիւնը կատարեց (Յոյց տէք Մշակի
ամբողջ 25 տարւալ Ռո-նեբի մէջ Արովեանի անուան լիշարակութիւնը,
մի հատիկ յօդած նորա մասին) բալց երբ, այլոց ջանքերով Արովեանի
50-ամեակը լիշարակելու պարտականութիւնը զգացնել տեց, ով եղաւ
կեղծողը ու Արովեանի անուանով սպիկուլացիա անողը,—Մշակ'ը, որը
հոգեհանգիստ սարքեց և սուր արցունքներ թափել ձեացրեց մի հե-
ղինակի համար, որի անունը մոռացնելու ջանքերը հէնց Մշակի
լուսթեան մէջ է երեացել, կրկնում ենք՝ ամբողջ 25 տարի, ով փա-
րիսեցիները)։—Բալց նոյն ալս տարիներումն է, որ լալորնի ուսում-
նասիրութեան առարկալ եղաւ Միքաէլ Նալբանդեանը. բալց ցոյց
տէք Մշակի 25 տարւալ Ռո-նեբի մէկն ու մէկում մի հար լօլա-
ծիկ Նալբանդեանի մասին, ով փարիսեցիները)։—Ալնորե, մեզնից հե-
ռու Պոլսում մի կովկասեցի հալ եպիսկոպոս. անցեալ տարի հրադա-
րակեց Պետրոս Եանշեանի կեանքը։—Թէ ով էր Պետրոս Գուրեանը,—
վախճանաւ աւելի քան 25 տարի առաջ, ալդ մնեք, արեւելեան
հալերս, իմացանք միալն ալս 90-ական թւականներին զրաւ ու հրա-
դարակաւ մի ուսումնասիրական զրքոլով։—Ինչո՞վ է մասնակցել
ալս ամենին Մշակը?

ԿԱՐ. ԳԱԼՖԱՅԱՆԻ մասին Մուրճում, վեց ամիս առաջ 1898, Ռո 10—11,
մեր աշխատակից պ. Սեհանը իւր պարտքն էր համարել՝ վերջապէս
ձալն հանել՝ ի Դիմաց Գալֆանանին մինչև երկինք բարձրաց-
նող ալն ուկլամների, որոնց աֆէրիստական բնաւորութիւնը նա,
Սեհանը, խորապէս զգում էր. Հաղիւ միալն կէս տարի է անցել նո-
րա ալդ զրաւից՝ ահա արդէն գալիս է ապացոյցը թէ որքան իրաւունք
ունէր մեր աշխատակիցը «Արեւելք»ի մէջ տպաւ ի ալդ թերթի աշխա-
տակից պ. Պոս Բօլօեանի նամակը Պարիզից, Նոր տոմարով մալիս
2-ին պ. Գալֆանան Բոդինիէնի փոքրիկ սրահի մէջ տաւ է եղել
Օթելլօի՝ Ներկալացումը, ուր զլիաւոր Դերը նա կատարել է հալերէն
լեղով։ Եկաւ են եղել մօտ քսան հոգի միալն, որոնցից 4-5-ը հալերս
վալագոլոր բարձրանում է. «Ու մարդ մը տեսալ (զրում է պ. Բօ-
լօեան) երկալն, բարակ, ցանցաւ մօրուքով, նոր բուսնող պէխերով,
և որ՝ ջրհանկրի հագուստներով՝ կը քալէր կամաց-կամաց. Օթելլօն
էր. Ու Դեռ չխոսած, բերանը չբացած, ալքերը սոսկալի կերպով
բացեցան, գոցեցան, քիթը բերանը տակն ու վրալ եղան, Դէմքին

Վ գծերը իրար խառնեցան: Ի՞նչ կ'ըլլար. կարծեցի թէ սառա ունէր խեղճը: Չէ, նախանձող Օթելլօն էր: Նստաւճու խօսիլ սկսաւ. հաշերէն պիտի խօսի՝ գրեւթ էր ազդին մէջ. բայց ինծի անկարելի եղաւ հասկնալ այդ Օթելլօին լեզուն. ոչ (թիւրքա) հաշերէն էր արտասանածը ոչ ալ ռուսահաշերէն. ագռաւի պոռչըրուքներ միայն:

«Երբէք աւերքան տղելլ անճոռնի բան տեսած չէի: Մովէն գէշ կերպով բռնւած խեղճ մարդու մը շէմքին վը նմանէր: Որ փոխելու ահուելի ճիգեր կ'ընէ և որուն աչքերը կողկոններէն դուրս կ'իջնան: Ու այս Օթելլօն էր որ որքի եղաւ: Նրկայն թեքը զորս ուր պահելը չէր գիտեր, քովն ի վար կ'երերալին, ու չանկարծ, պէտք չեղած տեղը, երկինք կը բարձրանալին հիւանդագին կծկումներով: Խնդալի, լալի, պոռալի: Սրտի սեղմում՝ մը ունեցաւ: Խեղճ Շէքսպիր խեղճ Օթելլօ — Եփրս, հոսկէ հոսկէ խնդալու ձայներ կը լսէի. չէ. բաւական է: Վարագուրը իջաւ. ու չորս-հինգ հաշերը ծափերու մէջ խեղդեցին սրահը: Խեղճ տշաք, որո՞ւք իրենց ամօթէն ինչ ընելին չէին գիտեր. կը խնդալին իրենք ալ, բայց կը ծափահարէին: Ինչ տխուր տպաւորութիւն տւին արդեօք հոն գտնուող մէկ քանի ֆրանսացիներուն՝ Հալոց շերասանութեան վրալո:

Բաւականանում ենք աւսքանը միայն արտադրելով Արեւելքի աշխատակիցի գրածից, որպէս զի հնարաւորութիւն տանք աչն համեմատելու Մուրճ'ում վեց ամիս առաջ մեր աշխատակից պ. Սեեանի գրածի հետ (Մուրճ 1898 № 10-11) ուր նա աչնքան աներկդիմի խօսքերով պախարակում էր պ. Գալֆաեանին Պարիզից հալոց թերթերի մէջ մինչև երկինք հասցնողներին, որոնց մէջ մանաւանդ փալուում էր Նաւարեան անուն մի թղթակից Տարազ'ում: Չլինի թէ աչն ունի Նաւարեանն է ամեն տեղ տարածել նոյնը, և Արեւելեան Մամուլի և Արեւելքի մէջ և ալուր:

Կարող ենք աւելցնել որ մեր աշխատակից պ. Սեեան մեզ չանձնել է Պարիզից ստացած աֆիշը ակնարկւած ներկադպման մասին. աֆիշը զարդարւած է երկու ֆոտոպատկերներով Գալֆաեանի և նորա ներքև տրւած է ծանօթութիւն Գալֆաեանի մասին, ուր վերջինս անւանւած է Կ. Պոլսում հռչակ ստացած հալ ողբերգակ:

Բայց ահա և մի հանգամանք: Մուրճի մշտական աշխատակից պ. Սեեան, կարդալով հալոց թերթերում և մանաւանդ Տարազ'ում հրաշքներ պ. Գալֆաեանի մասին, իւր պարտքը համարեց, որպէս վերը ասացինք, իւր զգացմունքը չափնել, անձնական ծանօթութեամբ կարողութեամբ համոզւած, որ Նաւարեանի տեղեկատուութիւնները մէջ առնւազն ակնաւորն ունկլամալին չափազանցութիւններ կան: Եւ ինչ եղաւ դորա պատասխանը? Երկրասարդ բանաստեղծ պ. Յովհ.

Փուլմանեանը, որը, որքան մեզ չափոնի է, իւր աշխատակցութիւնը Մուրճ'ում թողնելուց, ուրեմն հինգ տարիներէից ի վեր ոչ մի առիթ բաւականաչափ չարմար չէր սեպել Մուրճ'ի անունը բարով լիշատակելու, պատական առիթ չարեց պ. Սեւանի անձնական համոզմունքի անկեղծ արտապայտութեան առթիւ՝ վերջապէս առաջին անգամ Մուրճ'ի անունը լիշատակելու փորձն անել (տ. Տարազ 1898, № 49)։ Եւ աչդ առաջին փորձի վերտառութիւնն էր «Տաշանդ և Բթամրուլութիւն»։ Տաշանդը՝ Գալֆաեանն է, որը «իւր մենախորհուրդ ճանապարհի աչ կէտին է հասած», իսկ Բթամրուլութիւնը... տեսէք, մեր բազմափորձ և մշտական աշխատակիցը, որը չանդգնել էր մեզ մի անծանօթ Նաւարեանի ռեկլամաչին երեցող չափազանցութիւններին ընդդէմ գնալ՝ չարգելու համար Աշամեանի լիշատակը, որի հետ աչքան թեթեւ սրտով Տարազ'ի մէջ խաղեր էր խաղում Նաւարեանը։ Եւ Պարիզից եկող լուրերը... «բոթ» էին «հալոց աշխարհքի իմաստուններին»... «Մի գաղտնի խորհրդով տաշանդի երեւութից միշտ վրդովուում է բթամրուլութիւնը»... Եւ աչն աչ կարգով ու տոնով Մեզ համար պ. Կ. Գալֆաեանը լուզիլ խնդիր չի կարող ներկայացնել։ Երանի թէ մի հալի լաջուրի Աշամեանին էլ գերազանցել։ մենք գուցէ ինքնեքս քալելու անենք իմանալու կատարեալ իսկութիւնը պ. Գալֆաեանի մասին։ Բաց ներկալ շէպքում բաւականին լուզիլ է տեսնել որ ոչ առանց քանքարի մի երկտասարդ, որի անունը, չարերի աննախանձ բարեացակամութեան շնորհիւ, շեռ աւելի հեռուն է տարածել քան ինչ նա ինքը չուսալ կարող էր, Մուրճ'ի անունը առաջին անգամ փորձում էր ալ՝ տաշանդներ չըգնահատողի շեր չափազանցելով Նորան։ Ակամալ մարդ փորձում է հարցնել՝ չլինի թէ պ. Յովհ. Թումանեանը գանգատուոր է որ Մուրճ'ը նորան բաւականաչափ չի գնահատել։ Թէ ամեն գնահատութիւն պէտք է նմանի Նաւարեանի ռեկլամներին, որ սա կատարել է պ. Գալֆաեանի նկատմամբ...

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԻ։ Ալ. Ծատուրեանի բանաստեղծութիւնները, որոնց երկրորդ հատորը մօտ ամիսներս լուս տեսաւ, նիւթ ու առիթ էր տաւ մի քննադատականի Արամ Անտոնեանի կողմից Կ. Պոլսի «Մասիս» երկչաքաթաթերթի մէջ։ Պր. Անտոնեանը «վերջին տասը տարիներու մէջ» արեւելեան հալոց իբրև «ճանչցած» բանաստեղծներ լիշատակում է նաև անուններ, որ մենք իսկի չենք էլ ճանաչում. աչդ ինչ «Ղազարեան» է և ով է «Կալժուհի»։ չգիտնալնուս պարծառով չենք էլ ժխտում, որ աչդ ստորագրութիւններով ոտանաւորներ կարող են տպւած լինել (թուղթը ինչ էլ վերցնում), բաց ախար, վերջապէս, չի կարելի աչ ու աչ թերթի մէջ գրած անունները նաև «ճանաչած» անուններ չալտարարել։ Երկրորդ, պ. Անտո-

նեանի թւած անունների շարքում կան անուններ ես, որոնց արեւելեան հայերը բնաւ «բանաստեղծ» կոչումը չեն չափազայրած, թէեւ այս, գրած են. բայց եթէ «ճանաչւած» լինելը տպւած լինելով որոշւի—ապա պ. Անդրեանը, որպէս վստահ ենք, կարող կը լինէր իւր չիշածների թիւը ոչ միայն կրկնապատկել ալ և հնգապատկել: Թերևս հարցնեն մեզ թէ գրողներից որին ենք համարում ճանաչւած և որին՝ ոչ: Պատասխան.— ճանաչւածը նա է, ով ունի իւր կողմը ա) ընթերցող հասարակութիւն, որը ճետաքրքրութիւն է ցոյց տալիս շէպի գրողը և ուրեմն սպասում նորա չաջորդ գրածներին. բ) ճամսկողների մեծ կամ փոքր խումբ. գ) գրողների իրենց կարծիքը իրենց ճիւղի մէջ ընկերակից համարել կամեցողների մասին: Այդ երեք կարևորութիւն ունեցող հանգամանքները, առայժմ միացրած են իրենց վրայ, այս տասը տարում հրապարակ եկած բանաստեղծներից արեւելեան հայոց մէջ, միմիայն սոքա՝ Յովհաննէս Յովհաննիսեան, Ալ. Մադուրեան, Լեոն Մանուէլեան, Յովհաննէս Թումանեան, Շանթ, Աւ. Խաչակեան և Դերենիկ Գեմիրճեան, հարկաւ, իրարից շատ տարբեր իրենց ներքին արժանաւորութիւններով, բայց և ալնպէս, իրենց ունեցածովը՝ ընդհանրութիւնից ճանաչւած, վերը չիշած պալմաններէ մտքով: Եթէ քննադատները կամենում են լուրջ գործ կատարել և արեւելեան հայոց նորագոյն բանաստեղծութեան մասին խօսելով նաև արեւելեան հայոց սխալ կամ ուղիղ հասկացողութիւնը ճանաչել, առայժմ իրենց քննելիքը պիտի սահմանափակեն վերը չիշած անուններով: Արեւելեան ճայութիւնը պատասխանատու չի կարող լինել ամեն մէկի համար, որը գրել է կամենում և կամ խրախուսւում այս ու աչն թերթի կողմից: Ով կամենում է նաև արեւելեան հայութեան (և ոչ այս ու աչն խմբագիրների ու հրատարակիչների) հասկացողութիւնից խօսել՝ թող ուրեմն մեր վերը չիշած երեք հանգամանքները ի նկատի ունենալ և ոչ թէ այս ու աչն հանդէսի մէջ երեցած սորորագրութիւնները և առանձին հրատարակութիւնների ճակատի անունները ժողովէ ու միմեանց ետևից չարէ՛ չադարարելով նոցա իբրև ներկայացուցիչներ արեւելեան հայոց բանաստեղծութեան: Գալ տարիները գուցէ վերը չիշած շարքին նոր անուններ աւելանան հէնց ալժմեան գրողներից, բայց առայժմ հասարակութիւն ունեցողներ չիշեալներն են միայն: Մենք չենք ասում թէ միւս նորերի մասին չի կարելի գրել, բայց ալ միւսները չպէտք է ներկայացնեն իբրև «ճանաչւած» բանաստեղծներ:

† Բիւիւնէի, Լիւբլիգ, վախճանեց ներկալ ապրիլին իւր հայրենի Դարմշոտ քաղաքում (Գերմանիա), 75 տարեկան հասակում (ծն. 1824 թ. մարտին). 1855 թ.ին էր որ գրեց «Ութ և Նիւթ» անունով

գիրքը (գերմաներէն), որը նորագոյն մատերիալիզմի ամենաժողովրդական գործքն է և թարգմանւած է եւրոպական շատ լեզուներով. ունեցաւ ապա բազմաթիւ տպագրութիւններ. Գրեց ապա «Բնութիւնը և Ոգին», «Բնութիւնից և Գիտութիւնից», «Մարդը և Նրա Դիրքը բնութեան մէջ», «Անասունների ոգեկան կեանքից» (Հանգուցեալի քօլըր Լուիզա Բիւխնէր, ծնւ. 1821, վախճ. 1877-ին, չափերի զրոյ էր և գործիչ կանանց արդիւնագործական գործունէութեան օգտին):

† ԿԻՊՊԷՐՏ, Հենրիխ, հռչակաւոր աշխարհագիր և քարտեզագիր. ծնւ. լու. 1818 թ. Բերլինում, որի համալսարանի պրոֆէսոր եղաւ 1859-ից չէս: Նա ամենասիրելի աշակերտն էր Կարլ Ռիտտէրի, որը աշխարհագրութիւնը բարձրացրեց համալսարանական գիտութեան բարձրութեան: Հանգուցեալի անունը աւելի սերտ կապւած է Փոքր Ասիայի հետ, որի քարտեզագրութիւնը նորա ձեռակերտն է, որպէս արդիւնք անձնական Դիտտլոթիւնների և պատմական աղբիւրների ուսումնասիրութեան:

† ԿԱՇԵՎԱՐՈՎ Ա.-ՌՈՒԴՆԵՆՈՎ Ա. Վարւարա Ալէքսանդրովնա: Հանգուցեալը առաջին ռուս կինն էր որին, 1860-ական թւականներին, թոյլ տրեց բժշկականութիւն ուսանելու Նախկին բժշկական-վիրաբուժական (այժմ գինեորական-բժշկական) ակադեմիայում (Պետերբ.): Նորան թոյլ տրեց, իբրեւ բացառութիւն, չաճախել Դասերին և կլինիկները ուսանողների հետ միասին: Նա ներկայացաւ պատերազմական մինիստրին որպէս Ներկայացուցչուհի Ուրալեան երկրի բազմաթիւ կին զոհաբնակութեան, որը ոչ մի կերպ չէր կամենում լինել տղամարդ բժիշկների օգնութեան: Ուրալեան կազակ ժողովուրդը նորան թողակ նշանակեց, երբ իբրեւ ուսանուհի ընդունեց: Նա փաշլուն կերպով աւարտեց 1868-ին, որպէս Դոքտորանտ. 1876-ին նա պաշտպանեց իւր Դիսերտացիան և ստացաւ Դոքտորի աստիճան: Նորա համար լաւագոյն վարձատրութիւնը եղաւ 1872 թւին կանանց բժշկական Դասընթացների հիմնւիլը (Պետերբ.), որոնք այնքան անձնազոհ գործիչներ տուց Ռուսիային կանանց աշխարհայրում:

† ԱԶԱՐԵԱՆ Ստեփանոս-Պետ. X, արքեպիսկոպոս, պատրիարք Թիւրքիայի հայ-կաթոլիկների, վախճանեց Կ. Պոլսում ներկա ապրիլին: Հասուն հայ-կաթոլիկների պատրիարքի օրօք, (1866-80) որի ժամանակ հայ կաթոլիկները բաժանեցին հասունեան (հոռմաւական) և հակա-հասունեան (ազգային ծէսերով կաթոլիկական) կոտակցութիւններին: Աղաբեանը Հասունի աջ բազուկն էր և ընտրեց Նորա լաշրդը՝ 1881 թւին: Յաջողրեց հակահասունեաններին հասունեանների հետ ի մի

ձուլելու: Ազարեան պարտիարքը ապա, հալկական կոորդաձեւերի միջոցին, ակնալուրին հակահալկական շիրք բռնեց շէպի թիւրքիայի կառավարութիւնը, որով կաթողիկական պրոպագանդայի համար հաւերի մէջ պաշտօնական ամեն շիւրութիւններ սրելով:

† ԿԱՍՏԵԼԱՐ, Էմիլիօ, իսպանական հանրապետական կուսակցութեան պարագլուխը, նշանաւոր հռետոր, վախճ. հ. տ. մալխի 12-ին (ծնւ. 1832-ին) Ամիգէթ թագաւորի հրաժարականից չորս 1873-ին եղաւ ներք. զործերի մինիստր, ապա 9 սեպտ. 1873 թ. 1 լուսն. 1874 թ. մինիստրների նախագահ շիքրադարական իշխանութեամբ. թագաւորութեան վերականգնումից շէպ՝ եղաւ անդամ ընդդիմադիր կուսակցութեան:

† ՄՍԵՐԵԱՆՅ Զարմալը, Հանգուցեալը Մոսկաւում գրաքննական տեսուչ էր և մի ժամանակ հրատարակում էր «Փարոս» թերթը: Որշին էր Մսեր Մսերեանի և հարը՝ հաւերէնագէտ Լեոն Մսերեանցի:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

(Ուր թական չկայ—ներկայ տարւանն է)

- 2) ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, Լեոն, «Խորտակած կեանք», Մեծ վէպ, երեք մասից: Արտադրած Մուրճ ամսագրից: Թիֆլ., տպար. Տ. Մ. Ռոտինեանցի, 1 ռուբլի:
- 3) ՇԱՆԹ, «Դարձը», վէպ. Արտադր. Մուրճից: Թիֆլ., տպարան Ռոտինեանի. 40 կոպէկ:
- 4) ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ, Սմիլնովա.—«Բարեկամներ», թարգմ. ռուսերէնից: Թիֆլ., տպ. Կ. Մարտիրոսեանի, 7 կոպէկ:
- 5) ԶԵԼԻՆՍԿԻ, Ստ. «Բուսերի գործածութիւնը Երևանի նահանգում» Արտադրած Ազգագրական հանդէսից: Թիֆլ., տպարան Ռոտինեանի, գինը ?
- 6) ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.—Հաւ-բոշաներ (Ազգագրական ուսումնասիրութիւն արտադր. «Ազգագրական Հանդիսից»), Թիֆլիս տպ. Մ. Ռոտին. 50 կոպէկ:
- 7) ԱՐԾՐՈՒՆԻ, Վ., բժշկ. «Թնամադարութիւն առողջ երեխաներին (ծննդեան լուսնից մինչև երեք տարեկան հասակը), Հրատ. Թ. Հ. Հրատ. Լեոն. Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, 25 կոպէկ:
- 8) ՄՈՒԼԻՆԻ, «Կեղծ աղնուհի», թարգմ. Փրանս. Մելիք Յ. Պէլլիքեան. Բաքու, տպ. Արօր. 1898, գինը 40 կոպէկ:
- 9) ՀԱՌԻՖ, Վիլհելմ «Երիտասարդ անգլիացիներ», թարգմ. օր. Շ. Տ.-Ն. Հր. Թ. Հ. Հրատ. Լեոն. Թիֆլ., տպ. Կ. Մարտիրոսեանցի, 5 կոպէկ:

- 10) ՆՈՅՆ. «Հրէայ Աքնէրը որ ոչինչ չէր տեսել. Թարգմ. օր. Շ. Տ.-Ն»
Հրաբ. Թ. Հ. Հր. Ընկ. Թիֆլ., տպ. Կ. Մարտ., 3 կողէկ.
- 11) ԼԷՕ. «Գլադսորոն. Հրաբ. Թ. Հ. Հր. Ընկ., Թիֆլ., տպ. Տ. Ռոորին»,
80 կողէկ.
- 12) ԱՌԱՔԵԼԵԱՆ, Հ.—«Գալիլէի. նրա կեանքը և գիտական գործունէս-
թիւնը», Հր. Թ. Հ. Հր. Ընկ., Թիֆլ., տպ. Շարաձէ, 25 կողէկ.
- 13) ՊՈՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ.—«Մեր Խեչօն». զրուց. Թիֆլիս, տպ. Կ. Մարտի-
րոսեանի, գինը ?.
- 14) ПАНТЮХОВЪ, И. И. д-ръ.—О народномъ врачеваніи въ За-
кавказ. краѣ. Тифл., типогр. Т. Ротиніанца, 30 կողէկ.
- 15) ЗАВАРОВЪ, С. Опытъ изслѣдованія сельскаго хозяйства хлѣбород-
наго района Эриванск. губ. и Карск. области. Изд. Имп. Кавк.
Общ. Сельск. Хоз.—Тифлисъ, тип. Шарадзе. գինը? (434 էջ).